ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14

ք. Երևան 03 հուլիսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ) ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. **Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 10 800 000 (տասը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
կառավարական տուն 3	<<Յունիբանկ>> ԲԲԸ, <<Քոչար>> մասնաճյուղ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 24144000617900
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01203702
Հ/Հ 900011033934	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
---------- Ա. Մկրտչյան	---------- Գ. Բաղդասարյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
03.07.2020 թ. կնքված
ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	71241200/113		ՀՀ դրամ	10 800 000	10 800 000	1	ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 77-րդ օրացուցային օրը ներառյալ՝ համաձայն Հավելված N 1.1-ի

Տեխնիկական բնութագիր

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	• Սպանդանոցների բազմակի կիրառման օրինակելի նախագծերը նախատեսվում են ՀՀ մարզերի տարբեր համայնքներում տեղակայելու (տեղակապելու) համար • Սպանդանոցների նախագծային լուծումները կնախատեսեն 5, 10, 20 և 40 անասնագլուխ հզորությամբ օբյեկտների կառուցման հնարավորություն Շենքերի մակերեսներն ընտրվել են՝ համապատասխանաբար 72քմ, 120քմ, 200քմ և 400քմ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրամանի և СНиП 2.10.03-84-ի պահանջների շրջանակներում • Նախատեսվում է մշակել մոդուլային տիպի, մետաղական կոնստրուկցիաներով պատրաստված բջիջներից սպանդանոցների կառուցման, բազմակի կիրառման օրինակելի նախագծային փաստաթղթեր
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	**Նախատեսվում է** - նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, կապի, ջրահեռացման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի անհրաժեշտ տեխնոլոգիական հարդարում, - նախագծով նախատեսել մասնաշենքի (-երի) համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (ըստ անհրաժեշտության թեքահարթակներ, առանձնացված սանհանգույց, բազրիք, լրացուցիչ լուսավորություն, այլ միջոցառումներ), - կոյուղու կենտրոնացված համակարգի բացակայության դեպքերի համար նախատեսել բիո-մեխանիկական մաքրման կայան կամ կոյուղու կուտակման հոր՝ անհրաժեշտ հաշվարկային ծավալով - նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար **(առանձին նախահաշվով)**, դիտարկելով նաև էլեկտրական կաթսաներով ջեռուցման հնարավորությունը՝ արևային ֆոտովոլտային պանելների տեղադրման համատեքստում

	- նախագծման ընթացիկ աշխատանքները և առաջարկվող նյութերը աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** • 5, 10, 20 և 40 անասնագլուխ հզորությամբ սպանդանոցների կառուցման նախագիծ • Արևային ջրատաքացուցիչ և ֆոտովոլտային պանելներով համակարգեր՝ տարեկան էներգիայի պահանջարկի բավարարման ամբողջական հզորությամբ /տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու նպատակով/, • Այլ ենթակառուցվածքներ ՝ ըստ առաջադրանքի • Շենքի կոնստրուկտիվ համակարգը անհրաժեշտ է նախատեսել պողպատե կոնստրուկցիաներից, գործարանային պայմաններում արտադրված բջիջների տեսքով /նախատեսելով ունիֆիկացված բջիջներ/, որոնք պետք է հնարավոր լինի տեղափոխել շինհրապարակ բեռնատարների միջոցով և տեղում՝ նախապես կառուցված հիմքերի վրա, տեղադրվեն, ամրացվեն հիմքերին՝ ներդիր էլեմենտների միջոցով, ամրացվեն մեկը մյուսին և ապահովեն կառույցի ամբողջական տեսքը: Նախագիծը իր մեջ պետք է պարունակի նաև բջիջների ամրակցման լուծումները և հանգույցները, որոնք պետք է նախատեսված լինեն համապատասխան սեյսմիկ ուժերի ազդեցության հաշվարկի դեպքում և մշակվի ԿՄ/ԿՄ փուլով (конструкции металлические), ԿՄԴ/ԿՄԴ/ փուլով (конструкции металлические деталировочные) կիրառելով Advance Steel, Tekla Structures ծրագրային ապահովումներ • Սպանդանոցային համալիրին բնորոշ առանձին շինությունների և կառուցվածքների տեղակայման նախագծային լուծումներ (կենսաբանական թափոնների հավաքման, վնասազերծման և ոչնչացման հորեր)
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** ՀՀ վարչապետի 01.02.2020թ թիվ 02/12.4/2629-2020, 05.03.2020թ թիվ ԱՔ/49-2020 հանձնարարականներ **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ) **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - СНиП 2.10.03-84 - ՀՀ կառավարության 29.06.2006թ **<Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը և ներկայացվող պահանջները սահմանելու մասին>** N 993-Ն որոշում - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման, - ՀՀ առողջապահության նախարարի 02.05.2003թ <Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ> N 2-III-4.2-01-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին> N 302 հրաման - ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի եվ շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին - СНиП II-23-81* Стальные конструкции - ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում լրացում կատարելու մասին - ՀՀՇՆ II-7.02-95. Շինարարական նորմեր. շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների - ՍՆիՊ 2.08.02-89 <Հասարակական շենքեր և շինություններ (այդ թվում <Актуализированная редакция>),

	- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման, - ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին>, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր>, - <Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> ՀՀ օրենք, - <Օրգանական գյուղատնտեսության մասին> ՀՀ օրենք, ՀՕ-23-Ն, 08.04.2008թ. - ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք, - ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ - ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին> - ГОСТ 25957-83 Здания и сооружения мобильные (инвентарные). Классификация. Термины и определения - ГОСТ 22853-86 Здания мобильные (инвентарные). Общие технические условия
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»** - **Նախագծի բոլոր բաժինները մշակել՝ հաշվի առնելով առաջադրանքի բնույթը /մոդուլային տիպի բլոկներով կառուցապատում/ առ այն, որ կառույցը պետք է նախատեսել պողպատե կոնստրուկցիաներով պատրաստված բջիջներից, որոնց հիմնական մասը պետք է արտադրվի գործարանային պայմաններում** **<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** 1. **Ընդհանուր բացատրագիր** 2. **Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/ - Եռաչափ մոդելավորում /VIDEO անիմացիոն նյութի պատրաստմամբ/ 3. **Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, (KM, KMD) - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 4. **Ինժեներական** (ներքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - Էլեկտրամատակարարման /ներառյալ հողանցման համակարգը/, լուսավորության /Ինսոլիացիոն հաշվարով հիմնավորված/, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության, ջեռուցման, կապի ցանցեր, անվտանգություն, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն, - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն - Կահավորման և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով, այդ թվում տեխնիկական հագեցվածության նախագիծ՝ ներառելով ընդհանուր նախահաշվի կազմի մեջ, որպես առանձին բաժին՝ ընդ որում հագեցումը պետք է լինի ամբողջական 5. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 6. Շինարարության կազմակերպման նախագիծ 7. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծի կազմում 8. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ 9. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:

	10. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ **Համաձայնեցումներ** *Նախագծի համաձայնեցում* ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, **1.** ՀՀ առողջապահության նախարարության, **2.** ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ: **3.** Ոլորտի գլխավոր կարգադրիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ
Այլ պահանջներ	***Եզրակացություններ*** **Փորձաքննություններ** - Որպես միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ նախագծահետազոտական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ **Պատվիրատուի կողմից,** - Պետական համալիր փորձաքննության ենթակա չէ, - Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննություն /համաձայն ՀՀ օրենսդրության/՝ ըստ անհրաժեշտության, - Նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատման գործընթացի ապահովում Պատվիրատուի հետ համատեղ՝ համաձայն ՀՀ կառավարության 07.06.2012թ. N 814-Ն որոշման, որպես ՀՀ-ում բազմակի օգտագործման օրինակելի նախագծի և պատվիրատուի կողմից դրա ներառում դրանց կատալոգում **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - Ամբողջ համալիրի շահագործման առավելագույն ժամկետ - Առանձին նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ - Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ - Էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն: ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐ (ԿԱՏԱԼՈԳ-ՁԵՌՆԱՐԿ) ՀՀ համայնքներում, բնակավայրերում տեղակայելու համար սպանդանոցների բազմակի օգտագործման օրինակելի նախագծի կատալոգի մշակում-թողարկում՝ խորհրդատվական ձեռնարկի և

	խոշորացված արժեքների ընդգրկմամբ (ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ ձեռքբերված նմանատիպ կատալոգների (անհատական բնակելի տների, բնակելի կառուցապատման էներգաարդյունավետ օբյեկտների և այլն) կազմի և կառուցվածքի օրինակով, որոնք տեղադրված են Կոմիտեի minurban.am կայք-էջում)՝ 10 օրինակ: **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)** Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից՝ **77 օրացուցային օր**՝ ըստ կից ներկայացված օրացուցային գրաֆիկի, ներառյալ քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերումը **14 օրացուցային օրվա ընթացքում**: **<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>** Ըստ անհրաժեշտության **(եթե պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»),** նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033934
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
<<Յունիբանկ>> ԲԲԸ, <<Քոչար>> մասնաճյուղ
Հ/Հ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
03 .07.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

Հ.հ	ՆՆԳ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 77 օրացուցային օր)										
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ելակետային նյութերի հավաքագրում											
2	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ, այդ թվում շինությունների եռաչափ մոդելավորումը											
3	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա անհրաժեշտ էսքիզային առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ ներքին էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների հաշվարկ											
4	ճարտարապետաշինարարական լուծումների մշակում											
5	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ											
6	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ											
7	Նախագծի լրակազմի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում											

8	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում											
9	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում											

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033934
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
<<Յունիբանկ>> ԲԲԸ, <<Քոչար>> մասնաճյուղ
Հ/Հ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
03 .07.2020 թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/113	Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	10 800 000	10 800 000	10 800 000	10 800 000	10 800 000	10 800 000	10 800 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033934
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
<<Յունիբանկ>> ԲԲԸ, <<Քոչար>> մասնաճյուղ
Հ/Հ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
03.07.2020 թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
03 .07.2020 թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Բանկային գաղտնիք

0025 ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
Հեռ. (374 10) 59 55 55
Ֆաքս. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Տելեքս. 243313 UNIJAM

1-5, 53, 12 Charents str., Yerevan, Armenia 0025
Tel. (374 10)59 55 55
Fax. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Telex. 243313 UNIJAM

«02» 07 2020 թ.

N 1090

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

ք. Երևան

Ընդունելով ի գիտություն, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 (այսուհետ՝ Բենեֆիցիար) պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով նախատեսված կանխավճարների ստացման համար <<ՆՈՐԱՇԵՆ>> ՆԱԽԱԳԾԱ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ Ա/Կ-ն (այսուհետ՝ Պրինցիպալը) պարտավոր է ներկայացնել բանկային երաշխիք՝ 2,700,000 /երկու միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով (այսուհետ՝ երաշխիքային գումար), <<Յունիբանկ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխավոր) ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (Ժառանգների) Երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (Ժառանգների) հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման: Երաշխավորի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է այն գումարով, որով տրված է սույն բանկային երաշխիքը:

Բենեֆիցիարի կողմից Երաշխավորին նախնական պահանջ ներկայացվելու դեպքում Երաշխավորը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցարին պահանջված գումարը, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցարին անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերին, Պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման օրվանից և գործում է մինչև 01.11.2020թ. ներառյալ:

Վարչության նախագահ — Մեսրոպ Հակոբյան

Ֆինանսական տնօրեն-
Գլխավոր հաշվապահ — Գոհար Գրիգորյան

կատարող՝ Մերի Բաղդասարյան
(010) 20-28-31 /2033/

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Բանկային գաղտնիք

0025 ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
Հեռ. (374 10) 59 55 55
Ֆաքս. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Տելեքս. 243313 UNIJAM

1-5, 53, 12 Charents str., Yerevan, Armenia 0025
Tel. (374 10)59 55 55
Fax. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Telex. 243313 UNIJAM

«02» 07 2020 թ. N 1089

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **<<ՆՈՐԱՇԵՆ>> ՆԱԽԱԳԾԱ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ Ա/Կ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով <Յունիբանկ> ԲԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 10,800,000 /տասը միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000664** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է: Երաշխավորի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է այն գումարով, որով տրված է սույն բանկային երաշխիքը:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14** ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

   1) N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

   3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման օրվանից և գործում է մինչև 01.11.2020թ. ներառյալ:

Վարչության նախագահ՝ Մեսրոպ Հակոբյան

Ֆինանսական տնօրեն՝ Գոհար Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ՝

կատարող՝ Մերի Բաղդասարյան
(010) 20-28-31 /2033/

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Բանկային գաղտնիք

0025 ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
Հեռ. (374 10) 59 55 55
Ֆաքս. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Տելեքս. 243313 UNIJAM

1-5, 53, 12 Charents str., Yerevan, Armenia 0025
Tel. (374 10)59 55 55
Fax. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Telex. 243313 UNIJAM

«02» 07 2020 թ.

N 1091

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և <<ՆՈՐԱՇԵՆ>> ՆԱԽԱԳԾԱ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ Ա/Կ-ի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով <Յունիբանկ> ԲԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,080,000 /մեկ միլիոն ութսուն հազար/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է: Երաշխավորի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է այն գումարով, որով տրված է սույն բանկային երաշխիքը:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/14 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման օրվանից և գործում է մինչև 01.11.2020թ. ներառյալ:

Վարչության նախագահ՝ Մեսրոպ Հակոբյան

Ֆինանսական տնօրեն-
Գլխավոր հաշվապահ՝ Գոհար Գրիգորյան

կատարող՝ Մերի Բաղդասարյան
(010) 20-28-31 /2033/